

**Բյուջեի մեծացմանը զուգահեռ հարկավոր է բարեփոխել գիտության համակարգը
(տեսագրություն)**

«Առաջին լրատվականի» «Դիսկուրս» հաղորդաշարի հյուրերն են Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ Արեգ Միքայելյանը: Թեման՝ գիտության ֆինանսավորման ավելացումը և ոլորտի բարեփախումները:

Հ. Բ.- Պարոնա՛յք, ի՞նչն է պատճառը, որ գիտության թեման այսքան հրատապ դարձավ մեր հասարակական քննարկումների օրակարգում, ինչո՞ւ հասարակությունը ի վերջո հանգեց գիտության կարևորության գիտակցմանը և արդյո՞ք հանգել է այդ գիտակցմանը, թե՞ պարզապես հպանցիկ աղմուկ է:

Ս. Հ.- Եթե գլոբալ նայենք խնդրին, սովորաբար գիտության խնդիրը դառնում է ակտուալ ֆինասատնտեսական ճգնաժամերի ժամանակ, եթե պատմությանը նայենք Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ և հետո... Հատկապես վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում շատ երկրներում սկսեցին ավելի լուրջ վերաբերվել ինովացիոն գործունեությանը, գիտական արդյունքների ապակայունացման խնդիրներին և ավելի հաճախակի խոսել գիտության կարևորության մասին: Ըստ երևույթին, պատճառներից մեկը դա է: Երբ նեղն ես ընկնում, նոր հասկանում ես, որ տնտեսությանը շատ ավելի կարող է փրկել գիտությունը, քան այլ միջոցառումներ:

Հ. Բ.- Մենք հիմա իսկապե՞ս նեղությունից ելնելով ենք հիշել գիտությունը:

Ս. Հ.- Ոչ, ես ասացի՝ խնդրին գլոբալ նայելու դեպքում, բայց կոնկրետ Հայաստանի պարագայում միզուցե դա իր դերակատարումն ունեցավ, բայցքանը նրանում է, որ գիտության ոլորտում վերջին 3-4 տարիների ընթացքում բավականին փոփոխություններ են տեղի ունեցել՝ և՛ ֆինանսավորման ձևերի հետ կապված, և՛ միջազգային համագործակցության ընդլայնման, և՛ երիտասարդներին ուղղված միջոցառումների հետ կապված: Այսինքն՝ գիտության ոլորտում բազմաթիվ նոր միջոցառումներ են հայտնվել, որին արդեն մասնակցում են հասարակության լայն խավերը և, բնականաբար, գիտության նկատմամբ ուշադրությունը և հոգածությունը մի քիչ ավելի սուր է ընկալվել, բայց Հայաստանի պարագայում իմ ասած երկրորդ պատճառն ավելի գերադասելի է:

Հ. Բ.- Ձեր կարծիքով, պարոն Միքայելյան, ո՞րն է գիտության հանդեպ ուշադրության և գիտության շուրջ բուռն քննարկումների պատճառը:

Ս. Մ.- Մեկը, որ ընդհանրապես գնալով զարգանում ենք և ավելի հեռանում ենք պատերազմական ճգնաժամային վիճակից, որը այնքան էլ հին չէ և, այնուամենայնիվ, թարմ է մեր սերունդների հիշողության մեջ: Բնականաբար, մեր նորանկախ պետության մեջ առաջին տարիներին գիտությունը չէր կարող առաջին պլանում լինել, դա աստիճանական պրոցես է, և վերջին տարիներին, իմ կարծիքով, նկատվում է

երիտասարդության ակտիվացում՝ հենց մեր աստղադիտարանի օրինակի վրա կարող եմ ասել, ինչ-որ մի դադարից հետո հանկարծ նորից երիտասարդների հոսք սկսվեց, և նայելով՝ կարող եմ ասել, որ մյուս հիմնարկներում նույնպես այդպիսի շարժում կա: Իհարկե, մի մասը առաջվա նման կրկին մեկնում են արտասահման. պատկերավոր ասած՝ ես կարծում եմ, որ ցանկացած երիտասարդի, եթե հանկարծ հնարավորություն ընձեռվի մեկնել արտասահմանում սովորելու կամ աշխատելու, գրեթե 90 տոկոսը կգնան: Այնուամենայնիվ՝ ես այդքան շատ վառ գույներով չեի տեսնի մեր այսօրվա գիտության հեռանկարը: Հենց միայն այս օրինակը փաստ է, բայց կան նաև դրական տեղաշարժեր: Պետության ղեկավարության կողմից շատ է սկսել խոսվել գիտության կարևորության մասին, բայց այդ խոսքերը դեռ պահանջում են նաև որոշակի գործողություններ: «Գիտելիքահենք հասարակություն» գոնե այսպիսի տերմիններ սկսել են շրջանառության մեջ դրվել:

Հ. Բ.- Ծաղկաձորում գիտնականների հետ հանդիպմանը Մերժ Սարգսյանը նշեց՝ ֆինանսավորման ավելացման մասին մոռացե՛ք, դրա փոխարեն զբաղվե՛ք հատկացվող ֆինանսների կառավարման արդյունավետությամբ: Դա արդյո՞ք չի նշանակում, որ պետությունը փաստացի ասում է, որ ես ձեռքերս լվանում եմ, ձեզ տալիս եմ այնքան փող, ինչքան տալիս եմ: Դուք ինքներդ ձեր մեջ որոշե՛ք՝ ով է արդարացի ստանում այդ փողը, ով՝ անարդար:

Ա. Մ.- Ես, քանի որ ներկա էի այդ քննարկմանը, այնպիսին էր տպավորությունը, որ հանրապետության նախագահը այո՛, հենց այդպես էլ ասաց, որ բյուջեի մեջ փոփոխության մեծ ակնկալիքներ պետք չէ ունենալ: Ես ինքս էլ մինչ այդ հանդիպումն այդպես էլ կարծում էի և հիմա էլ կարծում եմ, որովհետև, եթե յուրաքանչյուր ոլորտի հետևում կանգնած են մարդիկ, որոնք նույնպես շահագրգռված են իրենց ոլորտի ֆինանսները գոնե պահպանել, եթե ոչ աճեցնել, իսկ, ցավոք սրտի, մեր իրականության մեջ գիտության ոլորտը ամենաթույլ օղակն է՝ սկսած կրթության և գիտության նախարարությունից, վերջացրած գիտության ամբողջ ոլորտի՝ թե՛ պետական, թե՛ ընդհանրապես բոլոր պատասխանատուներով, նրանք առայժմ չունեն այն ուժը, որ պայքարեն բյուջեի մեջ էապես գումար ավելացնելու համար: Փոքր տոկոսներ կարելի է ակնկալել, բայց փաստ է, որ նախագահն էլ հենց դա շեշտեց, որ մի ակնկալեք կտրուկ ավելացում, իսկ դա նախաձեռնության պահանջն է. «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում», ընդ որում՝ այնտեղ նշված է երեք, չորս, հինգ անգամ ավելացում, որը, ըստ երևույթին, արդարացված է: Իսկապես, այսօր աշխատավարձերը այնքան ցածր են, որ գիտնականը վարորդից ցածր աշխատավարձ է ստանում, սա անթույլատրելի է: Այնտեղ եղավ այդպիսի քննարկում, այդպիսի արտահայտություն, բայց զարմանալի է, որ պետական ղեկավարները, պատգամավորները չեն հասկանում, թե ինչու պետք է գիտնականը բարձր ստանա: Ես փորձեցի իրենց բացատրել, որ դա ընդհանրապես տնտեսագիտական օրենք է, որ ապրանքը քիչ է, որ ապրանքը դեֆիցիտ է՝ նրա գինն էլ բարձր է, իսկ գիտնականը, բնականաբար, շատ ավելի քիչ է, և հազարից մեկը կարող է գիտնական դառնալ, բայց, ասենք, տասից մեկը կարող է վարորդ դառնալ: Բնականաբար, ամեն մարդ չի կարող գիտնական դառնալ, և դրա արժեքը շատ ավելի բարձր պետք է լինի՝ սա արդեն ոչ միայն տնտեսագիտական օրենք է, այլամբողջ աշխարհում ձևավորված իրականություն:

Հ. Բ.- Պարո՛ն Հարությունյան, դժվա՞ր է արդյոք մրցակցել մյուս գերատեսչությունների

հետ՝ պետական ֆինանսները ներգրավելու համար:

Ս. Ն.- Հարցին մենք շատ պրիմիտիվ ենք մոտենում: Մրցակցության խնդիր չկա, եթե դուք շենք եք կառուցում, պետք է շենքը նախագծեք, այնուհետև շենքի հիմքը պատրաստեք և որքան հնարավոր է՝ ամուր, որպեսզի ձեր կառուցած բարձրահարկ շենքը ամուր հիմքերի վրա լինի: Խորհրդային Միությունից մենք ժառանգել ենք 85 ինստիտուտ և բազմաթիվ բուհական լաբորատորիաներ: Պետական ինստիտուտների գերակշիռ մեծամասնությունը նմանատիպ խնդիրներով է զբաղված: Այսօր մենք ունենք 6 ֆիզիկայի ինստիտուտ, ունենք 4 ինստիտուտ, որը կենսաբանությամբ է զբաղվում, 4-5 ինստիտուտ ունենք, որոնք քիմիայով են զբաղվում և այլն: Ես հարց եմ տալիս, եթե դուք ձեր ընտանիքի բյուջեն բաշխելու ժամանակ ուղղակի հայտարարեք, որ բյուջեն փոքր է՝ մենք չենք կարող ապրել, դրանով ոչ մի բան չի լուծվի: Որպեսզի կարողանաս բյուջեն նորմալ օգտագործես, նախ պետք է համապատասխան հիմքեր ստեղծես, որպեսզի բյուջեն նորմալ ծախսվի: Ես նախագահի հետ լիովին համաձայն եմ, նախագահն ամեննին չի ասել, որ հույսներդ կտրեք, բյուջեի ավելացում չի լինելու: Եթե խնդիրը նորմալ ձևակերպվի, որը կբխի մեր պետության շահերից, այդ ժամանակ բյուջեն էլ ավել կլինի: Այսօր մենք ի վիճակի չենք 85 ինստիտուտ պահել: Եթե բյուջեն հինգ անգամ էլ ավելացնենք, 85 հետազոտական ինստիտուտ հնարավոր չէ պահել, նաև՝ բուհական լաբորատորիաներ և այլն: Այսօր մենք գիտական հիմնարկների օպտիմիզացիայի լուրջ խնդիրներ ունենք:

Ն. Բ.- Մինչև հիմա փորձ չի՞ արվել լուծել այդ խնդիրները: 20 տարիների ընթացքում մենք արդեն պետք է բավական կառուցվածքային խնդիրներ լուծած լինեինք:

Ս. Ն.- Այս 20 տարիների ընթացքում մենք ունեցել ենք զարգացման մի շարք փուլեր: Մեր պետության զարգացման այս մասը ես կբաժանեի երեք փուլերի: Առաջինը՝ Սպիտակի երկրաշարժ և Ղարաբաղյան պատերազմ, որը մեր տնտեսությունը հիմնովին ավերեց, երկրորդ փուլը պատերազմի հետևանքների վերացում և երրորդը՝ զարգացման փուլ: Մեր պետության զարգացման փուլը սկսվեց մոտավորապես 2000 թվականներից, և այն ժամանակ մինչև 2000 թվականը այնպիսի օրեր են եղել, որ օրվա հացի խնդիր ենք լուծել և մտածել գիտական հետազոտությունների, լուրջ գիտության մասին՝ ուղղակի ո՛չ ֆինանսն էր թույլ տալիս, ո՛չ ժամանակը և ո՛չ էլ հնարավորությունները: Մենք գիտության մասին սկսեցինք քիչ թե շատ լուրջ խոսել 2005-2006 թվականներից սկսած: Փաստորեն, եթե գիտության բարեփոխումների ժամանակագրությունը նայենք, գիտության ոլորտում լուրջ վերաբերմունք սկսել է ձևավորվել 2005-2006 թվականներին, այն դեպքում, երբ ԱՊՀ շատ երկրներում այդ գործընթացը սկսվեց 1993-1994 թվականներին: Այսինքն, Հայաստանն օբյեկտիվ պատճառներով բավական հետ է ընկել, և պետական կառույցները նույնպես իրենց մեղքի բաժինն ունեն, որ բարեփոխումների սկիզբը դրվեց 2005-2006-ից: Բայց, այնուամենայնիվ, բավականին քայլեր արդեն իսկ արված են: Հայաստանի Հանրապետությունում բյուջեի տեսքը, եթե նայենք, էապես տարբերվում է գիտության բյուջեից, որը կար 2005-2006 թվականներից: Այսօր բյուջեում առանձին ունենք միջազգային և տեղական գիտաժողովների ֆինանսավորում, որը նախկինում չկար: Այսօր հայ գիտնականների համար ունենք գործուղումների ֆոնդ. ցանկացած գիտնական, որը բանավոր զեկույցով հանդես է գալիս աշխարհի այս կամ այն երկրում կարող է ֆոնդից օգտվել, մենք ունենք ֆոնդեր, որոնք հատուկ երիտասարդների համար են, երիտասարդական գրանտային ծրագրեր, որը նախկինում չի եղել: Մենք

ստորագրել ենք ավելի քան 17-18 միջազգային պայմանագրեր և այսօր համատեղ ծրագրեր ենք իրականացնում Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի հետ, որը նախկինում չի եղել: Այսինքն` բավականին քայլեր արդեն արվել են, բայց քիչ են: Մենք դեռ բազմաթիվ անելիքներ ունենք, որպեսզի կարողանանք մեր համակարգը հասցնել միջազգային և եվրոպական ստանդարտների: Այդ ճանապարհին, իհարկե, բյուջեի մեծացումը շատ կարևոր է, բայց բյուջեի մեծացումից առաջ մեր համակարգը մենք պետք է լուրջ բարեփոխենք: Մենք չենք կարող պահել 85 ինստիտուտ, չենք կարող միաժամանակ ունենալ մի շարք համակարգեր, որոնք նման խնդիրներով են զբաղվում: Ակադեմիական, բուհական և ճյուղային ինստիտուտների համակարգը պետք է վերանայել: Այսօր գիտություն-կրթություն կապը բավականին վատ վիճակում է: Այս խնդիրները լուծման կարիք ունեն:

Հ. Բ.- Պարոն Միքայելյան, իսկ միզուցե արժի ոչ թե ֆինանսավորման ավելացումը դնել որպես պահանջի անկյունաքար, այլ հենց կառուցվածքային բարեփոխումներ ըր, այսինքն` համակարգի արդիականացումը, այնուհետև անցնել ֆինանսների ավելացման և բաշխման խնդիրներին:

Ա. Մ.- Ես մի քիչ այլ կարծիքի եմ, որովհետև այս ամենը ճիշտ է, բայց այս ամենը ճիշտ է ամեն ոլորտում: Եթե ամեն մի ոլորտում կառուցվածքային փոփոխություններ, կազմակերպչական կառավարման բարելավում գնա, բնականաբար, նույն ֆինանսները ավելի լավ կբաշխվեն, բայց մենք ունենք շատ ոլորտներում 250-ից մինչև 600 հազարի հասնող աշխատավարձեր, իսկ գիտության մեջ մի քանի տասնյակ հազար են: Լավագույն դեպքում մաքուր աշխատավարձը, որ հասնում է գիտաշխատողին` հարկերի ձևով, 50-60 հազարի կարգի է, իսկ երիտասարդները, որպես կանոն, ստանում են 32,5 հազար, այսինքն` նվազագույն աշխատավարձը: Բնականաբար, ինչպես կարող են նրանք գոյատևել, սպասել այդ բարեփոխումներին: Յուրաքանչյուր ամիս կործանարար է, հնարավոր չէ այդպես ապրել: Այդ մարդիկ այդ աշխատավարձով չեն կարող ապրել: Սա նշանակում է, որ նրանք կա՛մ ընտրում են այլ ոլորտներ, կա՛մ լավագույն դեպքում համատեղում են, այսինքն` ժամանակի չնչին մասն են նվիրում գիտությանը և արդեն դառնում են թույլ օղակը կամ վատ աշխատող գիտաշխատողներ, որոնցից ուզում ենք կարծես ազատվել կամ թողնում գնում են արտասահման: Բայց, փաստորեն, մենք ենք ստիպում գնալ այսպիսի քայլի: Սա այնպիսի փաստ է, որ պետք է ամեն ինչ ժամանակի, դինամիկայի մեջ նայել: Մենք արդեն տարիներ շարունակ կորուստներ ենք ունեցել, կարող ենք հետ նայել և տեսնել, թե այդ ամբողջ պրոցեսները ինչպես տեղի ունեցան: Ես կասեի, որ ամեն ամիս մենք կարող ենք զրկվել Հայաստանի ևս մեկ տասնյակ գիտնականներից, եթե կորցնենք մեր դպրոցը, իսկ քանի որ խորհրդային տարիներին ստեղծվել է, թեկուզ և ուռճացված տարբերակը, որովհետև այդ հնարավորությունները ավելի մեծ էին, բայց այդ դպրոցը արդեն մենք ունենք: Այսինքն, առանց խոշոր ներդրումների ունեցածը պահպանելը շատ ավելի հեշտ է և խելամիտ: Եթե մենք հիմա աֆրիկյան մի հետամնաց պետության մակարդակի լինեինք և գիտություն չունենայինք և զրոյից փորձեինք սկսել, բնականաբար, ոչ ոք չէր դնի այդպիսի խնդիր, որպեսզի մեր գիտությունը հասցնի, օրինակ, այսօրվա մակարդակի: Բայց եթե կա և կորցնում ենք, կարծում եմ` խելամիտ չէ:

Հ. Բ.- Պարոն Հարությունյան, Մերժ Սարգսյանը Ծաղկաձորում, խոսելով ֆինանսների կառավարման արդյունավետության մասին, գիտնականներին խորհուրդ տվեց

զբաղվել այդ հարցի ուսումնասիրմամբ: Արդյո՞ք դա պետության ֆունկցիան չպետք է լինի, այսինքն պարզել, թե գիտությանը տրվող փողերը ինչ արդյունավետությամբ են ծախսվում և դուք, որպես պետական մարմնի ղեկավար, ունե՞ք արդյոք պատկերացում, թե արդյունավետության ֆինանսավորումը ինչպիսին է՝ տոկոսային մոտավոր հարաբերակցությամբ:

Ս. Ն.-Այնքան էլ արդյունավետ չեն ծախսվում մեր գումարները: Մենք Սովետական Միությունից բավականին լավ ժառանգություն ունենք՝ և՛ դրական, և՛ բացասական իմաստով: Դրական իմաստով այն է, որ մի շարք գիտական դպրոցներ մենք ժառանգեցինք, որոնք այսօր առայժմ դեռ կարողանում են աշխատել և գոյատևել, իսկ որոշ դպրոցներ նույնիսկ զարգանալ, բայց միաժամանակ մենք ստացանք բազմաթիվ հիմնարկներ, որոնք, մեղմ ասած, մեզ պետք չէին: Հիմնարկներ կան, որոնք ուղղակի թղթի վրա են: Նրանք իրականում, եթե խորը նայենք, իրենցից ոչինչ չեն ներկայացնում:

Հ. Բ.- Մի՞ թե այդ հարցն այդքան բարդ է և տարիներ է պահանջում:

Ս. Ն.- Այո, բավականին բարդ է: Իհարկե, կարելի է ինչ-որ ձևով լուծել, բայց պատկերացրեք, որ դա բավականին լուրջ սոցիալական պրոբլեմներ կարող է առաջացնել: Այսօր Հայաստանի Հանրապետությունում 50 երիտասարդներ ունենք, որոնք պարոն Միքայելյանի ասած 32 հազարը չեն ստանում, այլ ստանում են 100 հազարից ավել: Մենք իրականացնում ենք գրանտային ծրագրեր և բազային ծրագրերից ենք ֆինանսավորվում: Ինչ վերաբերում է արտասահման գնալուն, ես այնքան վատ չեմ նայում դրան, որովհետև գիտությունը բաց համակարգ է: Կարևորը դինամիկ հավասարակշռություն լինի գնացողների և եկողների միջև: Այդ հավասարակշռությունը, ցավոք սրտի, չկա՝ գնացողների ուղղությամբ: Բայց գիտության մեջ արտասահման չգնալ և չաշխատել... Գիտությունը չի կարող զարգանալ, եթե դու արգելում ես նման բան անել: Գիտնականը պետք է շփվի, գիտաժողովների մասնակցի, գնա դրսում աշխատի, վերադառնա և այլն: Դա նորմալ ընթացք է: Ինչ վերաբերում է գիտնականների թվին, իհարկե, մենք խորհրդային ժամանակներում մոտ 30 հազար գիտնական ենք ունեցել, իսկ այսօր մոտավորապես 7.5 հազար մարդ է գրանցված մեզ մոտ: 7.5 հազար թիվը երեք միլիոն բնակիչ ունեցող պետության համար բավականին նորմալ թիվ է: Իտալիայում, օրինակ, 1000 քաղաքացուց երկուսն են գիտնական:

Հ. Բ.- Մերժ Սարգսյանի՝ «բա որ բոլորը դառնան գիտնական» խոսքերի մասին ի՞նչ կասեք:

Ս.Ն.- Ես այդ հանդիպմանը ներկա չեմ եղել, բայց պետք չէ սրել այդ արտահայտությունը: Հայաստանում մենք բազմաթիվ այլ ոլորտներ ունենք՝ բավականին լուրջ պրոբլեմներով: Դրանք առողջապահության, սոցիալական, պաշտպանության ոլորտներն են, և այլն: Պետք է իրատես լինել: Մեր պետությունը այնքան էլ հարուստ պետություն չէ, մենք շատ մեծ բյուջե չունենք, ունենք բազմաթիվ թոշակառուներ, ունենք բազմաթիվ սոցիալական խնդիրներ, և պահանջել գիտության բյուջեն բարձրացնել 10-20 անգամ և դրա դիմաց չառաջարկել որևէ նոր բան՝ կառավարման նոր ձևեր, օպտիմիզացիայի նոր մոտեցումներ, ինովացիոն քաղաքականության իրականացում, մասնավոր հատվածի և գիտության համագործակցություն և այլն, իրատեսական չէ:

Հ. Բ.- Պարոն Միքայելյան, դուք ֆինանսներ եք պահանջում, չկա՞ն այդ առաջարկները:

Ա.Մ.- Իհարկե՛ կան: Այդ հանդիպման առաջին կեսը նվիրված էր կազմակերպչական, կառավարման հարցերին, և նախագահը ներկա չէր, բայց ինքը հարց տվեց՝ դուք արդյոք քննարկե՞լ եք այդ ամենը, և դա, անշուշտ, քննարկվել էր, և այդ մարդիկ շատ լավ տեղյակ են ամեն ինչին, բոլոր թվերին տիրապետում են: Ես այլ բան կասեմ՝ մեզ մոտ, եթե խոսում ենք հարաբերակցությունից, միջինից շատ ցածր է: Վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտական հաշվետվությունը հրապարակվեց, ես էլ մանրակրկիտ վերլուծության ենթարկեցի, տարածել եմ լրատվամիջոցներով, բավականաչափ վիճակագրություն արեցինք և այնտեղից բխեցրինք, և ես կարող եմ պաշտոնապես հայտարարել, որ Հայաստանի գիտնականներն աշխարհում ամենաարդյունավետ աշխատող գիտնականներն են, եթե հարաբերակցում ենք գիտնականների թվին և ստացած գումարներին: ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական տվյալներով՝ կոնկրետ 1 դոլարին ընկնող գիտական արտադրանքը, որը տրվում է գիտությանը, ամենաբարձրը Հայաստանում է: Սա ի՞նչ է նշանակում. անկախ սրանից էլ ես միշտ պնդել եմ և էլի կպնդեմ՝ հայ ժողովուրդը իր ստեղծագործական մտքով տարբերվում է այլ ժողովուրդներից. Հայաստանի գլխավոր արժեքը, կարծում եմ, իր ստեղծագործական միտքն է և դարեր շարունակ կերտած մշակութային արժեքները: Հայաստանը չի կարող տնտեսապես հզոր երկիր լինել աշխարհում՝ թե տարածության, թե բնակչության և թե իր ռեսուրսներով: Ես պնդում եմ, որ Հայաստանում պետք է հատկապես այն ոլորտը զարգացնել, որը մեզ մոտ հաջող է ստացվում: Գիտությամբ զբաղվելու համար հայի միտքը շատ ավելի ճկուն է, շատ ավելի ստեղծագործ: Անցյալ տարի Միջազգային աստղագիտական միության նախագահը պաշտոնապես հայտարարեց, որ հայի ստեղծագործ միտքը տարբերվում է աշխարհի բոլոր ժողովուրդների ստեղծածից: Դրա համար մեզ մոտ, եթե ավելի շատ մարդիկ զբաղվեն գիտությամբ, ավելի մեծ օգուտ կբերեն մեր երկրին: Ես չեմ ասում ամբողջ ժողովրդի մասին, այստեղ խոսքը փոքր տոկոսների մասին է: Այսինքն, ում խելքը հասնում է՝ լավ կլինի անի այն, ինչը կարող է: Ես ձեզ հակառակ հարցը տամ՝ ինչո՞վ է զբաղվում մեր ժողովուրդը՝ վերավաճառքով: Ժողովրդի հիմնական մասը զբաղվում է վերավաճառքով, այսինքն առևտուր: Ընդ որում՝ տնտեսությանը վնաս տվող առևտուր: Ինչո՞ւ առևտրով պետք է երեք անգամ ավելի շատ զբաղվել, քանի դրա անհրաժեշտությունը կա, իսկ գիտության ոլորտում անընդհատ կրճատումներ ենք անում: Առանց այն էլ շատ կրճատել ենք և հասցրել ենք կրիտիկական քանակի: Մի քիչ էլ փոքրացնենք՝ կարող է ընդհանրապես մեռնի գիտությունը, որովհետև յուրաքանչյուր լաբորատորիայում, յուրաքանչյուր գիտական խմբում, բացի գիտական ղեկավարից, պետք են նաև օժանդակ մարդիկ, օգնական գիտնականներ, բայց ոչ այնքան բարձր մակարդակի: Միմիայն լավ գիտնականներ հնարավոր չէ ապահովել: Նույն խորհրդարանում չկան լավ և վատ պատգամավորներ, ինչո՞ւ է մեր խորհրդարանը այդքան ուռճացված: Ամեն ոլորտում այս հարցը կարելի է դնել, բայց միայն կենտրոնացել ենք գիտության վրա՝ կարծես գիտության մեջ ամեն ինչ վատ է՝ կազմակերպված, երբ որ այդ չնչին գումարներով ինչքան էլ բարեփոխումներ անեն՝ մաքսիմում 20 տոկոս էֆեկտ կարելի է ապահովել, այսինքն՝ լավացնել իրավիճակը, ոչ ավելին:

Հ. Բ.- Պարոն Հարությունյան, եթե ֆինանսավորումը չի ավելացվում, արդյոք

Իսկապես քիչ չէ՞ բարեփոխումների արդյունավետությունը:

Ս. Ն.- Ես նորից եմ կրկնում՝ բարեփոխումների և ֆինանսների ավելացումը պետք է լինի զուգահեռ: Այսինքն ֆինանսների ավելացումը պետք է զուգահեռ ընթանա նաև բարեփոխումների հետ: Առանց բարեփոխումների՝ ֆինանսների ավելացումը ոչնչի չի քերի: Ինձ ամեննին սխալ չհասկանաք: Ես դեմ չեմ որ գիտության բյուջեն ավելանա, իհարկե շատ կարևոր է, եթե պետությունը հարուստ լիներ: Բայց ցանկացած խնդիր լուծելու համար պետք է ընտրել օպտիմալ ճանապարհներ և դրանից հետո նոր կարելի է բյուջեի մեծացման մասին խոսել: Մեզ մոտ բավականին ցածր մակարդակի վրա է այսօր գտնվում մասնավոր հատված-գիտություն համագործակցությունը: Սովորաբար զարգացած երկրներում, որտեղ գիտությունը «սիներգիկ» համակարգ է և զարգանում է, գիտության պետական մասնաբաժինը կազմում է ամբողջ 20-30 տոկոսը: Հայաստանում այս խնդիրը լուծման կարիք ունի, մենք շատ խնդիրներ ունենք լուծելու, որպեսզի համակարգը կարողանա նորմալ աշխատել: Միայն փող ուզել, առանց լուրջ բարեփոխումների, էֆեկտիվ չի լինի:

Հ. Բ.- Պարո՛ն Հարությունյան, չէ՞ք կարծում, որ բարեփոխում իրականացնողը դուք պետք է լինեք: Միայն գիտնականները չեն, որ գան և բարեփոխումներ իրականացնեն:

Ս.Ն.- Ես գիտությունից եմ եկել: Լաբորանտից հասել եմ մինչև պրոֆեսոր և բոլորի հոգսերը շատ լավ պատկերացնում եմ, բայց նորից եմ կրկնում, որ պետք է արվի զուգահեռ: Իսկ բարեփոխումներ մենք պետք է անենք բոլորս միասին, համահունչ, առանց իրար խանգարելու, առանց իրար վրա ցեխ շպրտելու: Ցավոք սրտի, գիտնականների գերակշիռ մեծամասնությունն իրենց նեղ գիտությունից այն կողմ ոչինչ չի տեսնում, և սովոր են իրար վրա ցեխ շպրտել: Նման մոտեցումով ոչինչ չի ստացվի:

Հաղորդաշարն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի» ֆինանսական աջակցությամբ:

Տեսագրությունը հնարավոր է դիտել http://www.lin.am/arm/armenia_arts_31991.html հղումով: